

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» բաց բաժնետիրական ընկերության կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված պայմանագրեր

2014 թ. մայիսի 20-ին «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ստորագրել է «Խմբին ֆինանսավորում տրամադրելու մասին պայմանագիր», որով Գերմանական CRONIMET Holding GmbH ընկերությանը (ընկերության համարը՝ HRB 110997, հասցեն՝ Գերմանիա, 76189 Կարլսրուե, Ջյուդբեկենշտրասե, 22) տրամադրում է փոխառություն առավելագույնը 35 մլն. ԱՄՆ դոլարի չափով՝ տարեկան 3.4 տոկոս տոկոսադրույքով Հայաստանի Հանրապետությունում լրացուցիչ ներդրումներ կատարելու նպատակով:

2014 թ. մայիսի 26-ին «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ստորագրել է վարկային գծի և դրամական միջոցների գրավի պայմանագիր՝ 24,000,000 (քսանչորս միլիոն) ԱՄՆ դոլարի չափով:

«ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի փոփոխություն

2014 թ. մայիսի 27-ին «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ բաժնետերեր Գեմիկ Խաչիկի Կարապետյանը և Դավիթ Գեմիկի Կարապետյանը վաճառել են սեփականության իրավունքով իրենց պատկանող «ՄԱՔՈՒՐ ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ բոլոր բաժնետոմսերը (համապատասխանաբար 26410 հատ կամ 38.22 տոկոս և 4103 հատ կամ 5.94 տոկոս):

Նույն օրը գերմանական CRONIMET Holding GmbH ընկերությունը (ընկերության համարը՝ HRB 110997, հասցեն՝ Գերմանիա, 76189 Կարլսրուե, Ջյուդբեկենշտրասե, 22) գնել է շուկայում վաճառվող 30513 բաժնետոմսերը:

Գործարքները կնքվել են բորսայում, մեկ բաժնետոմսի արժեքը կազմել է 877,658 ՀՀ դրամ:

Գ. Կարապետյան տնօրենների խորհրդի նախագահ,
գլխավոր տնօրեն (ստորագրություն)

